



ԳԵՐԱՇՆՈՐՆ Տ. ԶԳՈՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐ-ՀԱԿՈԲՅԱՆ

Նորապսակ Տ. Զգոն եպիսկոպոսը, ավանդանի անունով Ներսես, ծնվել է 1904 թվականին Վանի Քյոլանի գյուղում: Նա իր նախնական կրթությունն ստանում է ծննդավայրի ծխական դպրոցում: Համաշխարհային առաջին պատերազմի տարիներին կորցնում է իր հարազատներից շատերին և 1918—1922 թվականներին որպես որբ ընդունվում է նախ Բաղդադի Տարագրելոց, Բաքուբայի, Նահր-Օմարի և ապա Երուսաղեմի Արարատյան որբանոցները:

1922 թվականին ընդունվում է Երուսաղեմի Ժառանգավորաց վարժարանը: 1927 թվականին հաջողությամբ ավարտում է Ժառանգավորաց վարժարանի դասարանական բաժնի քառամյա դասընթացը և սարկավադ է ձեռնադրվում Եղիշե Դուրյան պատրիարքից: Սաղիմական ուսանողության տարիներին աչքի է ընկնում իր աշխատասիրությամբ: Աշակերտել է Դուրյան պատրիարքին և Բարգեն եպիսկոպոս Կյուպենբյանին (ապա աթոռակից կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո):

1930 թվականին ավարտելով ընծայարանը, կուսակրոն քահանա է ձեռնադրվում լուսարարապետ Տ. Մեսրոպ եպիսկոպոս Նշանյանից և Ս. Աթոռից ներս կատարում է վանական-վարչական և ուսուցչական աշխատանքներ 1932—1937 թվականներին:

1937—1940 թվականներին վարում է Հարավային Ֆրանսիայի թեմի (Մարսել) առաջնորդական տեղապահի պաշտոնը:

1940 թվականին անցնում է Հյուսիսային Ամերիկա և որպես հոգևոր հովիվ պաշտոնավարում է Զիկագոյում, Նյու-Յորքում և Սան-Ֆրանցիսկոյում մինչև 1950 թվականը:

Ամերիկայում գտնված տարիներին Զգոն վարդապետը հետևում է Մգիդուիկ, Յունիոն պատիֆիկ սքոլ ալ ըլլիջըն աստվածաբանական ձեմարանի դասընթացներին և վկայվում է որպես «մեյլըր» աստվածաբանության, փիլիսոփայության, մանկավարժության և հոգեբանության:

1940—1943 թվականներին խմբագրում է Ամերիկայի Միացյալ Նահանգների հայոց



առաջնորդարանի պաշտոնաթիրթ «Հայաստանյայց Եկեղեցի» ամսագիրը:

1943 թվականին Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանից ստանում է ծայրագույն վարդապետության աստիճան:

1952—1956 թվականներին նշանակվում է հոգևոր հովիվ հայոց Միլանոյի, որտեղից 1956 թվականին անցնում է Իրաք՝ որպես Հայրապետական պատվիրակ և ընտրվում առաջնորդ Իրաքի հայոց:

Զգոն ծայրագույն վարդապետը 1930 թվականից սկսյալ վանական-վարչական, ուսուցչական և հասարակական իր գործունեությանը զուգակցել է նաև գրական աշխատանքը: Նա աշխատակցել է «Սիոն»-ին, «Հայաստանի կոշնակ»-ին: Նրա գրչին են պատկանում մի շարք արժեքավոր կրոնական-աստվածաբանական տպված և անտիպ

հայերեն և անգլերեն ուսումնասիրություններ, ինչպես՝ «Սեր և ամուսնություն» (գործնական աստվածաբանություն, տպ. Վենետիկ 1954 թ.), անտիպ՝ «Հոգեշահության համար», «Փրկության վարդապետությունը», «Քրիստոնեական», «Ավետարանի շունչով» (Գրողներ), «Վարդանանց ուղիով», «Մարդը՝ Բրիտանական ըմբռնումով» և այլն:

Իրաքում նրա առաջնորդական պաշտոնավարության օրերին գլուխ է բերվել Բաղդադի Հայոց Մայր Եկեղեցու, ինչպես նաև նրա կողքին նոր առաջնորդարանի շինությունը և Սիմոն Ղարիբյանի բարերարությունը կառուցված առաջնորդարանի տնտեսությունը ապահովող կառուցումը: Կյուլպենկյան հիմնադրության օգնության շնորհիվ զգալի թափ են առել նաև Բաղդադի, Բասրայի, Մուսուլի և Քերքուքի աղգային վարժարանների շինությունն ու ուսումնական մակարդակի բարձրացումը:

Նշելի է այն հուսադրիչ հանգամանքը, որ Զգոն վարդապետի առաջնորդության տարիներին Իրաքի հայությունը ապրում է հոգևոր և մտավոր կազմակերպվածության և վերելքի:

Քի մի շրջան: Զգոն վարդապետի գլխավորությամբ խմբագրվում են «Իրաքի հայոց անձնական իրավանց» և «Ապահովության հիմնադրման կանոններ»-ի նախագծերը:

1955 թվականի սեպտեմբերին Զգոն վարդապետը առաջին անգամ ուխտի է եկել Մայր Հայրենիք, իրրե Միլանոյի հոգևոր հովիվ:

1958 թվականի հոկտեմբերին նա մասնակցեց Վեհափառ Հայրապետի հորելյանական հանդիսություններին և հոկտեմբերի 19-ին ձեռնադրվեց եպիսկոպոս ձեռամբ Ազգիս Վեհափառ Հայրապետի:

Զգոն սրբազանը մեր պատրաստված և հավատալից հոգևորականներից է, լի եռանդով և հավատով, ծառայելու համար մեր Ս. Եկեղեցուն և ժողովրդին: Նա գտնվում է իր ուժերի և գործունեության հասունության շրջանում: Եկեղեցին և Ազգը նրանից սպասում են նորանոր ծառայություններ:

Սրտանց հաջողություն ենք մաղթում նորապսակ Զգոն սրբազանին՝ իր պատասխանատու պաշտոնավարության մեջ:

